


ՅՆՕՐԵՆ-ԽԱՐԱԳԻՐ
ՅԱՐԱԹԻՆ ԱՆՓԻՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար արեկն. աղջ դճ. 80
» » վեցամսեայ » 50
» » երկրորդն արեկն 30 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախսը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՄԵԿԵՆ Ի ՄԵԿ

Ուրուականը կը յառաջանայ Մատան-
շուխանը սաստիկ է թերական շրջանակնե-
րուն մէջ, և հաւանորէն եւրոպա ալ անհան-
գիստ է: Ռուսիա երեք կողմէն թուրքիոյ վրայ
կարշաւէ, դիւանագիտութեան մարտադաշ-
տին մէջ տակաւին: Հայաստան, Յունաստան,
Պուլկարիա. ահա՛ յենարանները:

Համախիտ հեծելազորներուն անդրկովկա-
սեան սահմանադիւին մտերը ներկայութիւնը
յանկարծ Ռուսիոյ միտքը կիյնայ, և ահա ազ-
դարարութիւն մը անոնց հեռացումին համար:
Սուլթանը կը պատասխանէ պատուանշաններ
խրկելով — ոչ թէ Մուրադիէֆի, ինչպէս սովոր-
ութիւն էր Լոպանօֆի օրերը — այլ Համի-
տիէի հրամանատարներուն, և անոնց գուն-
դերը աւելի ստուարացնելու կաշխատի:

Յունաստանի Եօրկիոս իշխանին Կրէտէի
կառավարչութիւնը կը պահանջէ Չարը — Ո՛չ,
կըսէ Սուլթանը, ատ չըլլար. իսլամական Բը-
գայումը կը վերաւորուի: — Չարը կը պնդէ
իր պահանջումին վրայ:

Եւ ահա հեռագիրները մեզի կը հաղոր-
դեն թէ Պուլկարիան ծանուցագիր մը խրկե-
լով Դրան՝ ծանր դիտողութիւններ կընէ
Մակեդոնիոյ զանազան կողմերը դործադրուած
ճնշումին համար: Բաղմաթիւ պուլկարներ
բանտարկուած և տանջուած են եղեր. ծա-
նուցագիրը կը պահանջէ պատասխանատու
սպաններու պաշտօնակալութիւնը:

Արեւելեան խնդիրը երեք կողմէն կը բաց-
ուի ուրեմն: Որչա՛փ մէկէն ի մէկ հեռացանք
այն օրերէն ուր Չարն ու Սուլթանը իրարու կը
գրկախառնուէին եղբայրաբար, հայկական
կոտորածներէն ետքը. ուր Յունաստան ա-
րիւնդւայ կը հեծէր Եսէմփի փաշայի ոտքերուն
տակ, և Վասու Կրէտէէն լսիկ մնջիկ գուրս
եղելու կը պատրաստուէր: Յունաստանի և
Կրէտէի բացարձակ տէրը թուրքիան էր. ինչ-
պէ՛ս մէկէն ի մէկ հեռացանք այն օրերէն ուր
Ֆէրիսնանտ իշխանը, Փէսը գլխաւոր, խոնար-
հաբար կը ծնրադրէր Սուլթանին առջեւ ու
իրեն երկնցուած ձեռքը ջերմեռանդաբար կը
համբուրէր: Դեռ հաղիւ քանի մը ամիս բո-
լորեցաւ, ու այս ամենը արդեօք պատմական
յիշատակներ պիտի ըլլան արդէն:

Կացութիւնը կարծուածէն աւելի տագ-
ապ ալից կերեւի, երբ Մայրագոյն-Արեւելքի

կնճռատութիւններուն վրայ կուգայ կը բարդուի
միւս արեւելեան հարցը:

Եւ Գերմանիոյ պիտի հարցուի: Հանե-
լովը հոգ է, բայց այս առաջին անգամ չէ
որ թուրքիոյ բարեկամները յարմար ժամա-
նակին կից մը կուտան անոր. և Վիլհէլմի
երուսաղէմ ուղեւորութիւնը կրնայ շատ ան-
հաճոյ հետեւանքներ ունենալ թուրքիոյ հա-
մար:

Ու արդարեւ ա՛լ Վիլհէլմի կը չափը ան-
ցուց: Արեւելքը Ռուսիոյ, Ֆրանսայի, Անգ-
լիոյ ժառանգական իրաւունքն էր. այս երեք
պետութիւններն էին որ իրարու հետ կը մըր-
ցէին թուրքիոյ կիսամեռ դիակին վրայ. Գեր-
մանիա մտրակ մը առաւ ու երեքը մէկէն
դուրս նետեց: Սուլթանը իր հովանիին տակ
պատասպարելով՝ ինք տիրացաւ Արեւելեան
խնդրին: Նմանապէս այդ երեք պետութիւննե-
րուն կը պատկանէր Մայրագոյն արեւելքը և ա-
հա Գերմանիա հոն ալ յոխորաւորուի կերեւի, ու
ամէնքը ետ մղել կուգէ: Ու այս ամէնը բա-
ւական չի համարելով՝ իր Բողոքական կրօնա-
պետի հովանին կուգէ տարածել այն երու-
սաղէմին վրայ ուր Օրթոտոքսութիւնը ու Կա-
թոլիկութիւնը թէեւ դէմառ դէմ, բայց և այն-
պէս փոխադարձ զիջողութիւններով ժամա-
նակ կանցընեն սպասելով վճռական ժամուն:
Գերմանիա հոն բոլորովին օտարտուի է:
Բայց բողոքական կայսրը կուգէ շլացնել արե-
ւելքը, քրիստոնեայ աշխարհը և զոնէ բա-
րոյապէս տիեզերական կայսեր համբաւը վա-
յելել մեծազորդ. այցելութեամբ մը Գրիս-
տոսի գերեզմանին: Ոչ Ֆրանսայի թագա-
պալի կամ հանրապետական վեհապետ մը,
ո՛չ ռուսական Չար մը տակաւին այդ այցե-
լութեամբ շրջուցած չեն աշխարհ. ո՛չ Ֆրան-
սա ո՛չ Ռուսիա կրնան հաշտ աչքով տեսնել
իրենց դարաւոր փառքին նոյնացումը: Եւ
հաւանական չէ որ նոր եռանքեր, իրենց անդ-
րանկութեան իրաւունքը վաճառեն, նոյն իսկ
հայկական կոտորածներու գնով:

Այսպէս ահա մէկէն ի մէկ արեւելեան հա-
րկոնին վրայ յեղաշրջումը կ'սկսի: Սպասենք.
գուցէ յետագարձն ալ տեսնենք: Ոչ մէկ ե-
րեւոյթ քաղաքականութեան մէջ տարօրինակ
կրնայ երեւիլ:

ՎԵՐՋԱԼՈՅՍԻ ԵՐԳԵՐ

Ա.

Փրփուր սուրբ ծիրանով կարկըցած,
Երազներու թեւեր կուտան ոսկեպէն.
Ու հին երգեր, յիշատակներ ձայնով ցած
կ'երգեն հոգւոյ մաւրաւած խորերէն:

Հորիզոնին վերայ հեռուն մենայցած,
Կարծես անխիթ՝ վերջալոյսի բոցերէն՝
Գորշ ծըխաններ, երգերու պէս նրբապայ,
Իրենց տարտամ ուրուագիծը կ'երգեն:

Միտքըս պրկող ցաւի լարերը տրխուր
Վերջալոյսի արեւին մէջ կը թաւրտան.
Ու անծանօթ հեշտանքներով դերաւուր

Ամբողջ մարմինը կը լենայ, կ'ողողուի.
Յոյսի թեւեր կը պարզուին անսահման,
Հոգիս մէջ խաղաղութեան ծաղուի:

Բ.

Երկրիս ձայները հանդարտած կը մարին.
Մթնոլորտին մէջ անբաշտ ռուսակախ
Լոյսի ցոլքեր կը խառնուին խառնուին,
Վերջալոյսի յետին ցոլքերը խաղաղ:

Ագռակներու վերջին երամ մը սեր սեւ
Գլխուս վերեւ կը բարձրանայ յաւորին.
Չղջիկի մը վախկոտ թռչնքը տրճու.
Ականջիս մօտ կը չը ինչ լոյս տարօրին:

* * *

Հոգիս տարտամ մթնշաղկը կը սիրէ,
Հոգեվարքը կարծես յոգնած լոյսերուն,
Կապոյտ ըստուերը թափանցիկ չըզարչէ,
Վերջալոյսի մարդկ ցոլքերը հեռուն:

25 Յունվ.

Լ.ԵՒՈՆ ԱՐԱՄԵԱՆ

ՏԱՂԱՆԴԻ ԱՆՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Քարկի մէջ անցած շարժու մեռաւ Էմիլ Ռիչ-
պուր վիպասանը, որուն բոլոր ճարտարութիւնն էր
տոեւանգում (տղոյ), գոգութեան, անիրաւութեան
և յետոյ արդարութեան յայդմանակը ապահովող
վիպասանութիւններով զբաղելը: Ֆրանսայի ժողո-
վուրդը Գրագէտ մը չէր, բառին այն իմաստովը
զոր հիմա մեր զարգացած դասակարգը կըմոռնէ:
Տոմէ մը կամ Լօթի մը չէր. «անբարոյական» կոչ-
ուող դարոյցին ալ չէր պատկաներ. և կը թողու
ահագին հարստութիւն մը: Ինք երբեք փրկիչը չուտ
մը թերթերու: Ցատկանշական պատմութիւն մը այս
առիթու:

Կամպէթթա երբ հիմնեց Լա Ռըբի Ռեքլայիլի
Ֆուանսեզը, անոր շուրջը բոլորեց տաղանդաւոր
հրապարակագիրներ ու գրագէտներ, բայց թերթը
կը կիսկար, քոյլ մը առաջ չէր երթար. և ահա
օր մը իրեն խրատ տրուեցաւ Ռիչպուրը կանչել:

Վիսապահանջ եկաւ, ու մեծ-տրիւնը, Հանրապետութեան մեծ վարիչը, անկէ խնդրեց իր ժողովրդապետ թերթին փրկութիւնը. վէպ մը ուր թուրք, թուրք, փախուտը մեծ դեր խաղային Ռիշարտը չուտ մը դործի ձեռնարկեց. մեծագործ ազգաբարձրները ծանուցին այս օրը զէպը օրութեան համար. և երբ Ռիշարտի թերթը երևաւ, Բրիթ Ռեքիւպիէն 30 000 օրինակի տեղադրութիւն մը ունեցաւ: Փրկուած էր. ինչ որ չէին կրցած բնել այդ բոլոր մեծ տաղանդները, Ռիշարտը մէկէն ի մէկ բոլոր:

Ո՛հ, մեծ տաղանդի անպէտքութիւնը:

Ծ Ա Ղ Կ Ե Մ Ա Ր Տ

Պատմաստան յուսմանութիւն մը պիտի բլայ տան անոնց համար որոնք ծաղիկեմանքի կողմն են: Ծաղիկ նուիրել Աստուծոյ, Աստուծածնին և նոյն իսկ սիրելիներուն, խորաններու վրայ ծաղիկ տնկել ինչպէս նաեւ մեր սիրելի մեռելներուն վրայ և կամ Բրիտանի գերեզմանին՝ աւագ ուրբաթ օրը, այս օր մենք օրինաւոր է: Թարգմանք մ'է այդ՝ մատուցուած Աստուծոյ և սիրոյ:

Բայց բաճկոնին քլաւոր ծաղիկով դարդարել և կամ կրկնելու պէս, ծաղիկ ունենալ գլխուն վրայ, ասիկայ յարգանքը մատուցանել է մեր անձին, հեռուաբար... ստուանային:

Այդ միտքով է որ բարոյաւ է մեր պատուական Հայրապետը և որուն արձագանգը ձեզ բերաւ ձեր նրբամիտ բարեկամը «Անցարդ»:

Աստուծոյ տան մէջ համեստութիւնը անխուսափելի պայման մըն է և արարչութեան Անոր հաճելի բլլալու համար չէ որ ծաղիկ կը դնենք, այլ նախ մեզի հաճոյք պատճառելու համար և ապա ուրիշներուն:

Բացառութիւն մը կարելի է ընել կրկնելու համար, և այս բացառութիւնը մեր նախամայր Եւային կսկսի. ահա ինչու համար մտքերնու չանցնիր դոյն խափանել:

Աղբարանդիրա Ե. Տ.

Երիտասարդութիւնը ծաղիկով եղեցի կերթայ երբ. ատոր պատճառը կայ:

Այդ անպատեհութիւնը կողմէ՞ր մէջտեղէն վերցնել. ըսէ՞ր թաղականներուն որ կրկնել վերաւորուն հանձն, եղաւ գնաց:

Գահիրէ Ե. Ն.

Ա Յ Ժ Մ Է Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՆԻԹԱԿԱՆԸ

Թիֆլիզի Մշակը, որ իր հրատարակման քառորդ դարու շրջանը քառորդ 1898ի ըսկիզբը, ամենօրեայ թերթի պիտի վերածուի՝ Բեդրապուրկէն ապաստած կառավարական արժանութիւնը հասնելուն պէս: Յունուարի անդլանիկի թիւին մէջ այս կարգադրութիւնը ծանուցանելու ատրի, խորհրդածութիւններ կրնէ որոնք յազմութեամբ զբաղող կամ հետաքրքրող որ եւ է հայու ուշադրութեան չեն կրնար փրկուիլ:

Գրիգոր Արծրունիի հիմնած թերթը, որ այնքան նշանակալից տեղ մը գրաւեց մասնաւոր Կովկասի Հայոց հասարակական կեանքին ու ազգային գրականութեան մէջ, եւ զոր՝ մեծանուն հրապարակագրին մահէն ի վեր՝ եռանդով ու հաւատարմութեամբ կը վարեն անոր քաղաքապետ աշակերտներն ու վաղեմի աշխատակիցները, քանակական հարուստ հրատարակութեան ետք հազիւ քառասուն կը ներշնչէ այսօր իր վարիչներուն՝ օրաթերթի ձեռնարկելու. քառասուն անշակցութիւնը չէր որ կը պակսէր իրենց ո՛չ աղ հոգեկան կորով. և ինքնակամը միայն վարանում կը պատճառէ: Եւ մնածն էր որ Մշակը

ամենէն աւելի տարածուած ու կարգաւորած թերթն է Կովկասի հայոց: Իր քաժանորդներուն թիւը 3000ի կը հասնի այսօր:

Առիթը չէ՞ պատասխանելու մեր այն քաղաքականներուն որոնք կառաջարկեն մեզի՝ Փարսիսի ծառայը մեծցունել ու երկօրեայ հրատարակել, թէ յանդգնութիւնը մեծ պիտի ըլլար, ուրախեայ գոյութեան մը ետք եւ համեմատաբար փոքրաթիւ հայ գաղութի մը մէջ, մինչ քանակական հարուստ Մշակը դեռ նոր կը համարձակի...:

Ռուսահայ միւս թերթերու վիճակին վրայ ինչու պակաս մը գծուած կը գտնուի այդ համարի մէջ.

Եւ, ատարադրաբար, մեր մամուլի շատ օրգանները, գնալով ոչ թէ աւելի ամբողջութեամբ և զուտ նախ նիւթաւոր աւելի ազգային, այլ, ընդհանրապէս աւելի ու աւելի քայքայուած են: Մենք ունենք միայն մի ամսագիր, քայքայ նա ամբողջութեամբ եղաւ դիմել հրապարակական փոխառութեան, իր շատ համեստ գոյութիւնը պահպանելու համար: Մենք ունենք միայն մի պատկերազարդ թերթ, և նա գրաւ է գրկում՝ զրամական նեղ վիճակի պատճառով: Հայոց միւլա գրի դէմ՝ տարածանի ու գրաշարներ կողմից հաւածանք է սկսած զատարանի միջոցով, իսկ մի ուրիշ լրագրի հրատարակիչ նիւթական այնպիսի նեղ վիճակի մէջ է, որ լրագրի ցրվիչը ամբողջութեամբ եղաւ զատարանի դիմել, իր մի քանի բարձրները ստանալու համար: Եւ այդ բոլորն այն ժամանակ, երբ հայ մամուլը բոլորէ է իր գոյութեան 100ամեակը: Այդ դժբաղդը գրութեան մէջ միթէ մեծ միջոցառութիւն է, որ Մշակը միակ քիչ շատ արագով լրագրին է համարվում: Մի ծաղիկով գարուն չի լինի...:

Այս ցաւալի երեւոյթներուն առջեւ, այն ազգային թերթերը որոնք տակաւին այս տեսակ ծայրայեղութիւններու հասած կամ պահանջատեւերու կողմէ դառն կոյուղալու հարկին մէջ չեն գտնուած, ինքզինքնին քաջաբերուած զգալու են համեմատաբար: Ահա՛ և ինքնակամ մեծագոյն վարձատրութիւնը մեր մամուլի վասակաւորներուն, ամեն տեղ ու ամեն ժամանակ:

Ի Ն Ձ ՈՒ Զ Ե Ն Վ Ջ Ա Ր Ե Ր

Անցեալ տարի մայիսին, ամիս մը որ կը յիշեցնէ վարդը, պիւլիսը, երակը, հագարը և վարս... ցանը, մայիսին մէջ, այս, Գահիրէյի ամեն հայ, որ քանի մէկ տարին լրացուցած ըլլալու դժբաղդութիւնը ունէր, նամակ մը կատարեալ որուն մէջ ազգային վարդութիւնը կը ծանուցանէր թէ Սահմանադրութեան 37րդ տարեգործին տոթիւ եղիպտոս, ընտել հայերէն ալ կը ինքզինքնէր... ցնծալ, այս բառին նիւթական ինքնատու:

Այս տոթիւ կը յիշեցունէր թէ ազգը սրբութեայ առաջ տանելու համար... կառավարութիւնը մը պէս... անհատները երբ կարգի բաժնուած էին... վակոններու նման:

Առաջին կարգը 75 զուռ էր, երկրորդը 50 և երրորդը 25: Ըստ հաճոյս վճարողներուն համար wagon-lit-ի գրութիւն մը հաստատուած էր որուն տակագինը գեւ չէր օրոշուած, սակայններու յանձն նախաժողով խառ զբաղած ըլլալուն համար:

Առջի բերան fumisterie մը կարծեսցաւ այս հրաւերը: — Ի՞նչպէս կարելի է, կըսին, Սահմանադրութիւնը չի ճանչնալ ապտեղ և անոր էն կենսական մէկ յօդուածը ընդունիլ:

Այս գիտութիւնը մեր զեկապարտներուն idée fixe դրդելու հանգամանքը չունէր, ասոնք հաւաքիչներ կարգեցին և ձեռքերնին մէյմէկ տողարկ տալով:

— Հայտէ՛, տղաք, ժողովեցէ՛ր նայինք, հրամայեցին:

* *

Անկէք ի վեր 10 ամիսներ անցան և այդ ազ-

գային տուրք բոլորէ՛ր զլուխէն հողիւ 3 միլիոն գանձուած է, 3 միլիոն՝ զորս հաւաքիչին մէկը... ճամբան դուռն էր:

Մենք հետաքրքիր եղանք դիմաւ թէ ինչու մեր պատուական ազգայինները այգրան աղ ընդունելութիւն մը բրած էին այդ ազգասիրական հրաւերին:

Հատարիչին մէկը հաճեցաւ մեզ հաղորդել իրեն տրուած պատասխանները զորս ամփոփելով ահա կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

75-ՆՈՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1. Առաջ հեղ տա 50նոցները ժողովեցէ՛ր տէ՛, պան մը կընենք:
2. Թող Գաղարական ժողովին մէջ հայերէ խօսին քի առա՛:
3. Ես իրենցով խիկնտելից կերթում, ի՞նչ տէյի ինձի առաջին քաղ զրեք են:
4. Հայտէ՛, բարեւ ըրէ՛ առ աղաներուն ըսէ՛քի, նախ սահմանադրական ըլլան տէ՛ ետքը բարա թող ուղեն:
5. Ես պարտեղիս համար ամուսնութեան հրաժանարար մը ուղեցի տէ՛ չուտին. հայտէ՛ գնա՛ քանդ:
6. Ծնելու բարա, մկրտուելու բարա, կարգուելու բարա, ամիսի բարա, հաղորդի բարա, աւետարանի բարա, իւղագինի փարա, խաչահանգիստի բարա, քանչէլիցի բարա, կտակի բարա, փոխանորդագրութեան բարա, մեռնելու բարա, գերեզմանի բարա, խաչի բարա, տէրտէրի բարա, տիրացուի փարա, մէյ մ'ալ տիշ քիրաթի՛ կուպեն կոր, սըվանց նայէ՛ հեղ:

50-ՆՈՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1. Առաջ տա զէնկներէն պաշտպեցէ՛ր տէ՛, մենք մեր պարտքը կը ճանչնանք:
2. Մեր լաշաները ողջ ըլլան, անոնք մեր տեղը կուտան կոր, մէյ մ'ալ մենք՝ սիրտ առնէք:
3. Պիտի տամ ամա, քիչ մը կայնէ գործս չըտկեմ:
4. Բարեւ ըրէ՛, ըսէ՛քի ևս տուրք չեմ՝ կրնար տալ, ձեռքս քանի մը բարա անցնի նէ՛ ան ալ սրիսը սրիսը կը պահեմ կոր քի մեռնիմ՝ նէ՛ սօխալը չի մնամ:
5. Թող ինձի մէկ ամիս թաղական ընեն 20 տարուանը փէլին կուտամ. տտանի ըսի տէյի զուրցէ՛, չի մոռնա:
6. Անունս ժամին գրան վրայ կը գրեն նէ՛, առ ին 50 զուռ կուտամ:

25-ՆՈՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1. «Մըքա կիթիփ գուրբուլաւսըն», հո՛ս ալ տուրք պիտի տանք զէյէր...:
2. Նապլո՛, ես բարա տամ քի թաղականները ուտեն, եաղմա եօք:
3. Փարոս խաղէթան տուէր ըսէ՛ նէ՛ կուտամ:
4. Ես մեռնիմ՝ նէ՛ թօխտան պիտի տամ:
5. Անոնք ունին նէ՛ թող ինձի տան:
6. Ի՞նչ հրամայիր, 25 զուռ մի, զէյէր ևս աղ բարան տաւելու եօլը չիյտէմ տէ՛...:

ՌԱՏԱՄԵՍ

Օ Ր ՈՒ Ա Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Կ. Պլայ աւստրիական ու ամերիկեան գետապանները ծանուցագիր մը տալով Դրան, դրամական հատուցում պահանջներ են այն վնասներուն համար զորս Հալէպի իշխանութիւնը պատճառած էին տեղւոյն ամերիկեան հիւպատոսին որ աւստրեան հպատակ է:

Դետապանները նմանապէս գիտողութիւն ուղղել են Դրան ի մասին այն վնասներուն զորս կը կրէ ծխախոտի Բէթին, կառավարութեան թղլ ընթացքին պատճառաւ, ինչ որ վտանգի կենթարկէ եւրոպական դրամագլուխները որոնք այդ գործին յատկացուած են:

— Զորեքշաբթի օրը երկրաշարժի ծանր ցնցումներ պատահեցին Դրանայի շրջակայները: Բազմաթիւ զոհեր կան և նիւթական մեծ վնաս: Կ. Պիւլէն կառավարական յանձն-

նախորդով մը խրկուելու է, նպատակն ու օգնութիւնն հասնելու :

Նոր հեռագրի մը նայելով, մեռնողներուն թիւն է քսան և վերապրողներունը յիսուն :

—Հէլլէն կառավարութիւնը բողոքեր է Դրան, Լաճարոնայի մէջ թուրք զինուորներուն և քրիստոնեաներուն միջև տեղի ունեցած արիւնահեղ ընդհանրութիւնն դէմ որուն շարժառիթն է առաքելութեան պահանջները զինուորներուն կողմէ :

—Եօրկիստ իշխանը Կրէտէի կառավարչականներուն առաջարկին՝ անգլիական ու ֆրանսական զենայանքներուն նոյն պատասխանը տուելու է Սուլթանը ինչ որ տուած էր արդէն Պ. Զինովիէֆին, զրեթէ մերժողական Միւս կողմէ, Կոստանդնուպոլսի կոմսը իմացուցեր է Վիեննայի օմմ. դեսպանին թէ Աւստրիա պիտի ընդգրկուի այդ ընտրելութեան ինչպէս նաեւ Գերմանիա, վասնզի այդ անուանումով՝ քոյր կղզին Յունաստանի միացուելու ժամանակն ինքիւր մը կը դառնայ պարզապէս : Ասով հանգեւած, Գերմանիոյ ընթացքը տակաւին որոշ կերպով ճշգրտած չերեւիր, և թայմզի բարեգեան թղթակցին խօսքին նայելով, ընդհակառակն հաւանութեան նշաններ ցոյց կուտայ եղբւր Գերմանիա : Իտալիա ալ համամիտ է այս ընտրելութեան :

—Եօրկիստ իշխանը Բարիկ պիտի ուղեւորի ի մօտոյ :

—Իսապական Սուրհանդակի լուրերուն մէջ Պէրլինէ հեռագիր մը կը կարդանք թէ գերման չրջանակներու մէջ մտահոգութիւն կը տիրէ որ չըլլայ թէ Եօրկիստ իշխանը յանկարծական կերպով Կրէտէ մտնէ ուր ընդհանուր ժողովը կառավարիչ հռչակէ զինքը :

—Աթէնքի օմմ. նոր դեսպան Ռիֆաթ պէյ իր պաշտօնատեղին հասնելով՝ գետապահապան գործերը ձեռք առած է :

—Անգլիոյ, Ֆրանսոյի և Ռուսիոյ վերջնական հաւանութիւնը տակաւին առնուած չէ Յունաստանի երեւմտեայ վրայ հաստատուելիք քննդրոյ ինչպէս նաեւ պարտաւորութիւնն հետ ըլլալիք կարգադրութեան մասին : Կը կարծուի թէ տէրութիւնը կատարելապէս համամիտ չեն տակաւին :

—Սթանբուլի կիսմայ թէ Պոլսի արիւն կողմէ Դրան ուղղուած բողոքագիրը (զոր յիշած ենք մեր այսօրուան խմբագրականին մէջ) Ռուսիոյ ներշնչմամբ գրուած է :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Հինգշաբթի օրը, Խորվաթեան հիմնագիր Մուհամմէտ Ալիի մահուան տարեգարծն ըլլալով, Բարձր. Խորվաթ անոր դամբարանին այցելեց Միշնարեղի մզկիթին մէջ ուր ընդունուեցաւ նախարարապետ Մուսթաֆա Ֆէհմի փաշայի և բարձրաստիճան պաշտօնատարներու կողմէ :

—Լորտ Գրամըր ուրբաթ օրը տեսակցութիւն մը ունեցաւ Բարձր. Խորվաթ հետ Ապտինի պալատը :

—Յունաստանի և Եգիպտոսի միջև գիւլանագիտական յարաբերութիւնները, որոնք դադարած էին թուրքեւհէլլէն պատերազմին

պատճառաւ, վերականգնուեցաւ : Հէլլէն զինանշանը դրուեցաւ Գահիրէի ու Ալեքսանդրիոյ հիւպատոսարաններուն վրայ :

—Բամաղանի առթիւ Խորվաթական հրամանով Եգիպտոսի բանտերէն արձակուած դատապարտեալներուն թիւը կը հասնի 200ի :

—Ալեքսանդրիոյ ծխախոտի մաքսատան ներկայ յունուարի հասցիքը եղած է 90,844 ոսկի : 1897 տարւոյ նոյն ամսուան հասցիքն էր 94,353 ոսկի : Ուրեմն այս տարուան յունուարին 3508 ոսկիի նուազում կայ :

—Բուլղարի երկաթուղոյ փետրուար 1ի վիճակահանութեան առաջին պարզեւը, (300 հազար ֆրանք) չահող թիւն է 1,565,711 :

—Պ. Ալեքսանդր որ Գահիրէ եկած էր Խորվաթի շրջանակներուն գնման գործարարութիւնը կատարելու, երմտական նախարար Մալլուա փաշայի հետ պայմանագիրը ստորագրելու ետք, Ալեքսանդրիա վերադարձաւ : Այդ պայմանագրին գլխաւոր սրամագրութիւնները հրատարակած ենք Գ. երեսին մէջ :

—Երմտական նախարարութիւնն ի մօտոյ չըջարեւութեան պիտի հանէ եգիպտական մէկ զուլնոց նիւթէ գրամներ :

—Օրէնք-քօմիքի տեսարան մը ի Կարպիէ : Գեղանի արար աղջիկ մը Ֆաթմա, Գաֆուր-է-Շէխի մէջ ամուսնացած էր իր մէկ հօրեղբորդուն հետ :

Մինչեւ հոս աչինչ տարօրինակ . բայց կերելի թէ աղջկանութեան առեւ իր սիրտեանը մէջ մէկէ աւելի փոքր-փոքրներ բացած էր տեղւոյն կայան երիտասարդութեան հետ :

Ասոնք իրենց հաշիւներու սօցը պահանջելու համար ուրիշ ճանքայ չեն դադար բայց եթէ առեւանգել գեղանի Ֆաթման և տանիլ հեռու տեղ մը տան մը՝ մէկ բակիւ ստիպելով որ ամուսնիւ թողու և մարքէ իրենց հաշիւը :

Սենսիթիւ մը չինելու վրայ էին երբ ոստիկանութիւնը վրայ հասնելով ուղած է առեւանգեալը ազատել այդ խստապահանջ սիրահարներուն ձեռքէն :

Ասոնք բնականաբար ատանկ աղոթ պատու մը զիրութեամբ ձեռքէ հանել չէին ուզեր, հետեւաբար ընդգրկութիւն, զէնք, կրակ, հրացան, քանի մը հողի սպաննուած, շատեր վիրաւորուած, պղտիկ Տրոյաթայ մը . . .

Բայց օրովհետեւ ամեն բան վերջ մը ունի, մահաւանդ սիրային ինդիքներու մէջ . ոստիկանութիւնը յաջողեցաւ Ֆաթման ազատել որ իր գերեզմարութեան միջոցին անշուշտ պղտիկ Աֆոնքներով քիչ շատ կարգադրած էր իր աւակախ մնացած հաշիւները :

ՍՈՒՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մօրնիկ Բօսքի տեղեկութեանց նայելով, Տէրվիշները Ասիութի մօտ Նեղոսի ճանաւարներ են չղթալով : Նոյն թերթին թերթիկից կը յաւելու թէ Եգիպտական թընդանօթակիր շրջանակները մինչեւ ճիշդ չըլլալով յառաջանալէ ետք՝ ստիպուել են ետ դառնալ չլինալով դիմանալ իրենց վրայ տեղացած Գրամի թնդանօթներու ռումբերուն :

Կերեւայ թէ, կրէ Սենք ճէյնս Կագէր, Մէնէլիքը շատ սերտիւ կապուած է Մահմուդին հետ որ հրամայած է իր էմիրներուն՝ դիմա-

դրութիւն չընել Ֆրանսացոց եթէ ասոնք դէպի այդ կողմերը յառաջանալ ուզեն, նկատելով որ Ֆրանսայիք հապշխոտանի բարեկամներն են :

Սահմանադրութիւն առնուած վերջին լուրերու նայելով, սէրտար Գիշէր փաշա և իր սպայակցութեան Վատի-Հաթիա կը դադարեն այս միջոցիս :

Յառաջիկայ երկուշաբթի մեծաբանակ ռազմամթերք կը հասնի Անգլիայէն, Սուրահի բանակը զրկուելու համար :

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԲԵՐԻՍՊՈՒՐԿ, 4 փետրուար — Ռուս մասուրը կրէ թէ Եօրկիստ իշխանին Կրէտէի կառավարչականներուն մօտին Աւստրիոյ ցոյց տուած ընդգրկութիւնը պատճառաւ կրնայ ըլլալ որ եւրոպական համաձայնութիւնը խզուի :

ԲԱՐԻՉ, 4 փետրուար. — Օրէնքի Հանրի իշխանին ի մօտոյ Հապշխոտան ուղեւորներուն առթիւ սեղան մը տրուեցաւ ի պատիւ անոր :

Կ. ՊՈԼԻՍ, 4 փետրուար. — Սուլթանին խորհրդականներէն շատերը ջերմապէս կը համոզեն զինքը ընդունիլ Եօրկիստ իշխանին ընտրելութիւնը : Այսպէսով, կրնան, քրիստոնեայ վեհապետի մը որդին հարկատու կըլլայ իշխանին, ինչ որ պիտի բարձրացունէ խալիֆայութեան ազդեցութիւնը :

ՕՐ. ՄՍԵՐԵԱՆՅԻ ՆՈՒԱԳԱՆԱՆԻՍԸ

Չորեքշաբթի զիշեր, 9 փետրուար, ժամը 9 1/2 ին 0թէ Գօնթիւնայի մէջ տեղի պիտի ունենայ Օր. Մսերեանցի (Մատի Մարսէլ) նուագահանգիստը որ եղանակին ամենէն փայլուն մէկ երաժշտական երեկոյթը ըլլալ կը խոստանայ :

Եւրոպական շրջանակներու մէջ շատ համակիր ընդունելութիւն մը եղած է Օր. Մսերեանցի հրաւերին և տարակոյտ չկայ որ հայ գաղութն ալ իր ներկայութեամբ պիտի պատուէ Ռուսաստան օրիորդին երեկոյթը :

Այդ ձայնական ու գործիական նուագահանգիստին իրենց աջակցութիւնը պիտի նուիրեն Օր. Հանրիէթ Մարիլիւի, Տիար և Տիկին Պարալէ, և պարոն Ֆարուքի :

Օր. Մսերեանց պիտի երգէ Վիլհելմի մէկ ոսմանը Je crois en toi, Վէրտի Պալ Մաւֆէի մեծ aria-ն, Ռուսիայէլայի ոսման մը, ձիօթօն տալ aria-ն, Սթուպանի Շանսօն Ռիսը և Վէրտի Forza del Destino (aria) :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Կը յիշեցնենք մեր ընթերցողներուն թէ վաղը գիշեր է որ Տիկին Մաուր Պէնչեան իրեն նպատակի երեկոյթը պիտի տայ Ապու խալիլ թատրոնին մէջ :

Ընտրուած խաղն է ԿԱՌԱՊԱՆը Էօթէն Սիւի նշանաւոր թատերգութիւններէն մին ուրուն մէջ Տիկին Մաուր շատ յաջող դերակատարութիւն մը ունի :

Համակրելի դերասանուհիին արժէքը գնահատողները անշուշտ պիտի վաւերանան ներկայ գտնուիլ վաղը գիշերուան երեկոյթին զոր փայլուն ընելու համար ամեն ջոհողութիւն ըրած է նպատաստորեալ Տիկինը :

ԴԱՇՆԱԿԻ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կը ծանուցուի թէ Muller-ի դորժարանէն ելած սոցաւոր դաշնակի մը վիճակահանութիւնը մօտ օրերս տեղի պիտի ունենայ Հայ. Բարեգոր. ընկ. սրճարանին մէջ, հետեւաբար ամեն անգամ որ կը փութաքին այդ տոմսերէն ունենալ պիտի տաճապարին զինքն նոյն սրճարանին տնօրէնութեան կամ թէ ընթերցասիրոց ընկ. կեդրոնատեղին ուր կը ծախուին միացեալ սակաւարկ տոմսերը : 1—2

«ԽՏԻՎԻՅԷ»-ԻՆ Վ.Ա.ՃԱՌՈՒՄԸ

Աւստրիական խորհրդի շտաբաններուն վաճառման գլխավոր պայմանները : Գնող ընկերութիւնը կը կազմեն Պ. Ալլէն Ալտէրըն, որուն կեդրոնատեղին է Աղեքսանդրիա, և վաճառական Պ. Ֆրանք Ռէտտալմէյ որ կը բնակի Մանչէսթըր : Եզրապատկան կառավարութիւնը այդ անգլիական ընկերութեան կը թողու խորհրդի 11 շտաբանները (Շարգիե, Տաֆաիլիե, Ֆէյուս, Մահալա, Բահմանիյե, Շիպիե, Թէվէիզ Բապարանի, Բրէնս Ապարա, Էյրահիւրա, Միսիւր, Նեկիյե) ինչպէս նաեւ թէ՛ Աղեքսանդրիոյ և թէ՛ Սիւէզի մէջ ունեցած աւազանները, նաւակները, զանազան կազմածները, գործարանները, գրասենեակները և այլն :

Վաճառման դինն է, այս ամենուն փոխարէն, 150,000 ոսկի, որուն 50,000ը վճարուած է արդէն : Միւս կողմէ, եզրապատկան կառավարութիւնը յանձն առած է տարեկան 6000 ոսկի նպաստ (subvention) յատկացնել անդէ : Նորակազմ ընկերութեան, տասնըհինգ տարուան համար, որ կընէ 90,000 ոսկի :

Պ. Պ. Ալտէրըն պիտի շարունակեն, ըստ առաջնոյն, շտաբանաւային կանոնաւոր երթեւակութիւններն ընդմէջ Աղեքսանդրիոյ ու Կ. Պոլսոյ և Աղեքսանդրիոյ ու Սուրիոյ ծովեզերներուն : Նոյնպէս Սիւէզի և Սուէզի միջեւ : Եզրապատկան թղթատարական պայտասկը ամեն ժամանակ ճիւղաւոր պիտի փոխադրուի այդ շտաբաններուն միջոցաւ որոնք միանգամայն 100ին 50 զեղչով պիտի փոխադրեն եզրապատկան կառավարութեան պաշտօնատարները ինչպէս նաեւ անոնց գոյքերը : Եզրապատկան կառավարութիւնը չի պիտի կրնայ Միջերկրականի ու Կարմիր ծովու մէջ շտաբանաւային երթեւեկութիւն հաստատել այն նաւահանգիստներուն համար ուր կը բանին անդէ ընկերութեան շտաբանները : Ընկերութիւնը իրաւունք ունի ընդլայնել իր գործունէութեան սահմանը ու երթեւեկութեան նոր գիծեր աւելցնել :

Պ. Պ. Ալտէրըն պարտաւոր են, բաց ի կեդրոնական վարչութեան պաշտօնէութենէն, իրենց ծառայութեան մէջ պահել խորհրդի շտաբաններու վարչութեան արդի պաշտօնեաները մինչեւ 1898 յունիս 30 : Այդ թուականէն ետք, աղատ են ուղած փոփոխութիւններն ներմուծելու :

ՏԻԿԻՆ ՍՕՖԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Տիկին Ազգապետան որ ծանօթ է իր արհեստին մէջ ունեցած հմտութեամբ և վարպետութեամբ, կը ծանուցանէ իր բազմաթիւ յանախորհներուն ինչպէս նաեւ յարկոյ հասարակութեան քէ իր բնակութիւնը փոխադրած է Եկեղեցիի մօտ Խուրուհի փողոց քիւ 53. (Ֆուրքերու վարժարանին հովանի փողոց) : 1—5

Ա Զ Դ

Եկեղեցւոյ փողոց ԱՐԱՐԱՏ դեղատանիս մէջ ամեն օր կ'ա օրէ ետք կ'արելի է գտնել տօք. ձեռքանակ. ծանօթ բժիշկը՝ վկայեալ Բարիկի համալսարանէն, որ պիտի ընդունի իրեն դիմող հիւանդները :

Ուրբաթ օր կ'ա օրէ վերջ ձրի դարմանում աղահասներու համար : 1—4

PHARMACIE DE LA POSTE

ԳԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՀԻԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղատանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն յետոյ թարմ դեղեր, չափաւոր գիներով : Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին : Անգլիական և ֆրանսական սքեսիպիքներ : Թարմ հաճախիչ ջուրեր, անուշահոտ քիւրք եւն. Բնական աղիք և մանրադիտական քննութիւնք : Դեղատանս կը յաճախեն հայ և օտարազգի ծախիւք բժիշկներ : Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար : 24—50

ՅՕԹՕԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիներով : Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ 7—10

Ա. Լ'ԷԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառատունէն Տեարք Յովակիմեան Եզրապայտայն հաստատուած են ի Գահիլէ և Մուսի փողոցը՝ Լաթիֆի գոհարավաճառատան զիմաց բացած են վաճառատուն մը որ կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ֆանելա, գուլպայ և զանազան տեսակ ընտիր ծապիկներ, օձիքներ, քեւնոցներ :

Ճօր. զանազանութիւն մաքուր քիւրքի, հոսեղէններ և արդու զարդի վերաբերեալ ամեն տեսակ ապրանք : Շեֆիլի հոշակաւոր պողպատեայ գործիներ, ամեյի, մկրաս, զմեյի եւն : ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐԻ : Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշդիւ և փութով կը կատարուին : 21—24

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶՏԵԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագոգեստներ, ևն. մաքրութիւն, ճշգրտահամեմատ, և խիստ չափաւոր գին : 18—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻՆԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻԷԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էթարէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էթարէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էթարէս 1 2 3 կարգ
Գահիլէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առտ.
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	12 35
Թանթա	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 44
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	1 54
Աղեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	3 51
									5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻԷԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էթարէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էթարէս 1 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էթարէս 1 2 3 կարգ
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 —
Թանթա	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Թանթա	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	—
Գահիլէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	4 25
									5 50

ԳԱՀԻԷ-ՄԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԷԶ-ԳԱՀԻԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ
Գահիլէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարաք)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
Պէնհա	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Ջակադիկ	» 1 34	8 54	Ջակադիկ	» 3 7	8 53
Ջակադիկ	մեկ. 1 44	9 4	» 3 17	9 3	—
Խամաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	» 4 13	9 47
Սիւէզ կայարան	» —	5 —	» 4 17	9 4	—
Տօք (քարաք)	» 6 55	—	Գահիլէ	» 5 5	10 35